ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ

4-րդ եռամսյակի

Միջանկյալ հաշվետվություն

ՀՀ, 0025, ք. Երևան, Չարենցի 12, թիվ 53, 1-5
հեռ. (+374 10) 59 22 59, էլ. փոստ՝ unibank@unibank.am
Ինտերնետային կայք՝ www.unibank.am

Եռամսյակի Հաշվետվություն թիվ 04, 25.01.2022թ.

Երևան 2022

Բանկի Վարչության հայտարարությունը

Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն Բանկի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Բանկի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը ու ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որոնց հետ առնչվել կամ առնչվում է Բանկը:

Մեսրոպ Հակոբյան	**Վարչության նախագահ - Գործադիր տնօրեն**		25.01.2022
Արարատ Ղուկասյան	**Վարչության նախագահի առաջին տեղակալ**		25.01.2022
Գոհար Գրիգորյան	**Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն - Գլխավոր հաշվապահ**		25.01.2022
Օվսաննա Առաքելյան	**Վարչության նախագահի տեղակալ, Իրավական սպասարկման և ժամկետանց պարտավորությունների հետբերման գծով տնօրեն**		
Դավիթ Պետրոսյան	**Վարչության անդամ, Կորպորատիվ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն**		
Գուրգեն Ղուկասյան	**Վարչության անդամ, Մանրածախ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն**		25.01.2022
Արթուր Ապերյան	**Վարչության անդամ, Օպերացիոն սպասարկման և տեղեկատվական համակարգերի տնօրեն**		25.01.2022

Յունիբանկ ԲԲԸ-ի կառավարման մարմինների միջանկյալ զեկույցը ներկայացնում է՝

- Բանկի բիզնես արդյունքների և զարգացման իրական պատկերի նկարագիրը
- Բանկի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար
- Հաշվետու ժամանակաշրջանում տեղի ունեցած կարևոր դեպքերի նկարագիրը

Բանկի ամփոփ ֆինանսական տվյալները

Բացարձակ արժեքով ներկայացված ցուցանիշներն արտահայտված են հազ. ՀՀ դրամով:

Ցուցանիշի անվանումը	2018թ. (աուդիտ անցած)	2019թ. (աուդիտ անցած)	2020թ. (աուդիտ անցած)	2021թ. 4-րդ եռամսյակ (աուդիտ չանցած)
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	931,297	1,326,981	238,576	400,971
Սեփական կապիտալի միջին մեծություն	33,176,713	33,165,728	34,095,834	34,210,683
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), %	2.8%	4.0%	0.7%	1.17%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	931,297	1,326,981	238,576	400,971
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	199,485,446	226,843,697	239,228,910	252,332,077
Ակտիվների շահութաբերություն (ROA), %	0.5%	0.6%	0.1%	0.16%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	931,297	1,326,981	238,576	400,971
Գործառնական եկամուտ	14,762,553	14,502,166	14,686,123	18,290,273
Զուտ շահույթի մարժա (NPM), %	6.3%	9.2%	1.6%	2.19%
Գործառնական եկամուտ	14,762,553	14,502,166	14,686,123	18,290,273
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	199,485,446	226,843,697	239,228,910	252,332,077
Ակտիվների օգտագործման գործակից (AU), %	7.4%	6.4%	6.1%	7.25%
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	199,485,446	226,843,697	239,228,910	252,332,077
Սեփական կապիտալի միջին մեծություն	33,176,713	33,165,728	34,095,834	34,210,683
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	6.01	6.84	7.02	7.38
Զուտ տոկոսային եկամուտ	10,518,060	10,136,153	10,051,244	10,188,557
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	151,855,857	167,324,156	181,933,869	176,633,818

Զուտ տոկոսային մարժա (NIM)	6.9%	6.1%	5.5%	5.77%
Տոկոսային եկամուտ	20,008,220	19,469,982	19,471,091	20,146,879
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	151,855,857	167,324,156	181,933,869	176,633,818
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն	13.2%	11.6%	10.7%	11.41%
Տոկոսային ծախսեր	9,490,160	9,333,829	9,419,847	9,958,322
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	164,735,879	191,193,293	202,322,737	213,106,307
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	5.8%	4.9%	4.7%	4.67%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	931,297	1,326,981	238,576	400,971
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը	204,896,525	204,896,525	204,896,525	205,264,084
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	4.55	6.48	1.16	1.95
Սպրեդ	7.4%	6.8%	6.0%	6.73%

Բանկի ակտիվները կազմել են 255.8 մլրդ դրամ՝ ավելանալով 8.9 մլրդ դրամով՝ նախորդ եռամսյակի վերջի ցուցանիշի համեմատ: Վարկային ներդրումները կազմել են 139.4 մլրդ դրամ, կամ ընդհանուր ակտիվների 54.5%-ը: Պարտավորությունների ծավալը կազմել է 221.2 մլրդ դրամ՝ ավելանալով 8.6 մլրդ դրամով նախորդ եռամսյակի վերջի ցուցանիշի համեմատ:

Պարտավորությունները հաճախորդների նկատմամբ կազմել են 191.9 մլրդ դրամ՝ ավելանալով 12.3 մլրդ դրամով նախորդ եռամսյակի վերջին ցուցանիշի համեմատ:

Բանկի կապիտալը

Կապիտալի համարժեքության նորմատիվը 2021թ. դեկտեմբերին կազմել է 14.71%՝ 2021թ. սեպտեմբերի համեմատ ավելանալով 0.23 տոկոսային կետով, ռիսկով կշռված ակտիվների նվազման հաշվին: Կապիտալի համարժեքության ցուցանիշը գերազանցում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն մակարդակը (12%):

31.12.2021թ. դրությամբ նորմատիվային կապիտալը կազմել է 30.2 մլրդ դրամ:

Զուտ շահույթը 2021 թ-ի տասներկու ամիսների արդյունքներով կազմել է 400,971 հազ ՀՀ դրամ:

Մանրածախ բիզնես

Մանրածախ բիզնեսում Բանկի աշխատանքն ուղղված էր գործիքակազմի կատարելագործմանը, բիզնես գործընթացների օպտիմալացմանը, հաճախորդների հետ հետադարձ կապի ուժեղացման միջոցով սպասարկման որակի բարձրացմանը:

Վարկավորման տոկոսադրույքի նվազեցման ուղղությամբ կենտրոնական բանկի քաղաքականության շրջանակներում Բանկն առաջարկել է հաճախորդներին առավել գրավիչ պայմաններ: Կայուն աճ արձանագրվել է ապրանքների և կենցաղային տեխնիկայի ձեռքբերման համար սպառողական վարկերի, ոսկու գրավով վարկերի գծով:

Բանկը շարունակել է ֆինանսավորման արժեքի նվազեցման քաղաքականությունը՝ ժամկետային ավանդների համար սահմանելով չափավոր տոկոսադրույքներ:

Կորպորատիվ բիզնես

Միկրո և փոքր բիզնեսի զարգացման ռազմավարությանը համահունչ, 2021թ. ընթացքում Յունիբանկը շարունակել է ակտիվ քայլերը՝ նպատակաուղղված հիշյալ սեգմենտի համար վարկային միջոցների հասանելիության բարձրացմանը: Կենտրոնանալով թիրախային սեգմենտների վրա՝ կորպորատիվ բիզնեսի ստորաբաժանման ջանքերն ակտիվորեն ուղղված էին շինարարության, սպասարկման ոլորտների, այդ թվում հյուրանոցային և ռեստորանային բիզնեսի ֆինանասավորմանը:

Սպասարկման ցանց, հաճախորդային բազա

31.12.2021թ-ի դրությամբ Յունիբանկի սպասարկման ցանցը ներառում էր 55 մասնաճյուղ Հայաստանում և Արցախում, 94 պրոմո կետ, 132 բանկոմատ, 142 վճարային տերմինալ: Մոսկվայում գործում է Բանկի ներկայացուցչությունը, որն օժանդակում է օտարերկրյա հաճախորդների ներգրավմանը: 2021թ. Ընթացքում Բանկը սպասարկել է ավելի քան 330,000 հաճախորդների:
Դրամական փոխանցումների սպասարկման ոլորտում շարունակվում է նկատվել ծավալների չնչին փոփոխություն, ինչը պայմանավորված է բանկի միջոցով ստացվող ֆիզիկական անձանց միջազգային ոչ առևտրային փոխանցումների համանման ծավալներով:

2022թ. ռազմավարական առաջնահերթությունները

Յունիբանկի կողմից հաստատված ռազմավարության շրջանակներում սահմանվել են 2022թ. զարգազման հետևյալ առանցքային առաջնահերթությունները՝

- Տեխնոլոգիական կատարելագործում, թվային հարթակի վաճառքի զարգացում,
- Վարկավորման բնագավառում արհեստական բանականության տեխնոլոգիաների հետագա զարգացում,
- Հաճախորդահեն մոտեցման զարգացում և հաճախորդների պահանջմունքների խորը վերլուծության հիման վրա՝ սպասարկման և գործիքակազմի ձևավորում նաև նրանց կոնտրագենտների համար
- Յունիբանկի ֆինանսական արդյունավետության և դիրքերի բարելավման ապահովում բանկային համակարգում, Բանկի ներդրումային գրավչության բարձրացում:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տեղի ունեցած կարևոր դեպքերի նկարագիրը

Այսօր Յունիբանկը ունիվերսալ բանկ է, որը հաճախորդներին առաջարկում է ժամանակակից բանկային ծառայությունների լայն տեսականի: Բանկի Խորհրդի մշակած ռազմավարությանը համապատասխան Յունիբանկի գործունեության հիմնական ուղղություններն են մանրածախ բիզնեսը և աջակցությունը փոքր և միջին ձեռնարկատիրությանը:

Յունիբանկ ԲԲԸ-ն 4-րդ եռամսյակի ընթացքում թողարկեց արտոնյալ բաժնետոմսեր, որոնք հնարավորություն են տալիս ստանալու հաստատագրված շահաբաժիններ: Բաժնետոմսերի եկամտաբերությունը կազմում է 12% տարեկան, ձեռքբերման նվազագույն փաթեթը 1 մլն դրամ, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը՝ 230 դրամ:
Բաժնետոմսերը ձեռք են բերել ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձինք: Թողարկման ծավալը կազմեց մոտ 1,1 մլրդ ՀՀ դրամ: Շուկա ստեղծողն էր Արմբրոկ ընկերությունը: Բաժնետոմսերի ցուցակումը տեղի ունեցավ Հայաստանի ֆոնդային բորսայում: Այս ընթացակարգը

մեծացնում է բաժնետոմսերի գրավչությունը, քանի որ 2020թ. մարտի 1-ից Հայաստանում արժեթղթերից ստացված եկամուտը չի հարկվում:
2021 թվականի նոյեմբերի 30-ին գումարվեց Յունիբանկ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով՝ համատեղ ներկայության կարգով իրական ժամանակի ռեժիմում Zoom հավելվածի միջոցով Բանկի կանոնադրության համալրումը հաստատելու նպատակով:
4-րդ եռամսյակի ընթացքում Յունիբանկը թողարկեց նաև դրամային և դոլարային պարտատոմսեր արժեկտրոնային բարձր եկամտաբերությամբ՝ համապատասխանաբար 9.8% և 4.8% տարեկան: Դրամային պարտատոմսերի թողարկման ծավալը կազմում է 250 մլն ՀՀ դրամ, դոլարային պարտատոմսերինը՝ 5 մլն ԱՄՆ դոլար: ՀՀ դրամի դեպքում պարտատոմսերի շրջանառության ժամկետը սահմանվել է 27 ամիս, դոլարի դեպքում՝ 36 ամիս: Արժեկտրոնային եկամուտը կվճարվի եռամսյակը մեկ: Թողարկման տեղաբաշխումը ավարտվեց մինչև 27.12.21թ., որից հետո պարտատոմսերը ցուցակվեցին AMX Հայաստանի ֆոնդային բորսայում:
SME Banking Club-ը հրապարակել է ԱՊՀ և Կովկասի 200 բանկերի՝ ՓՄՁ-ների համար նախատեսված վարկատեսակների ուսումնասիրության արդյունքները, ըստ որոնց Յունիբանկը ճանաչվել է տարածաշրջանում լավագույներից մեկը:
4-րդ եռամսյակում Յունիբանկը բացեց ևս մեկ նոր՝ Արին Բերդ մասնաճյուղը, որը գտնվում է Երևան, Էրեբունի համայնք, Տիտոգրադյան 2/1 հասցեում:
Հավատարիմ մնալով իր վարկային քաղաքականությանը՝ Բանկը շարունակել է դիվերսիֆիկացնել իր վարկային պորտֆելը՝ մեծացնելով մանրածախ վարկերի և ՓՄՁ վարկերի տեսակարար կշիռը վարկային պորտֆելում: Խոշոր ձեռնարկություններին վարկավորելիս Բանկը վարել է պահպանողական քաղաքականություն, հիմնականում ակտիվները կարճաժամկետ տեղաբաշխվել են համեմատաբար ցածր ռիսկային ճյուղերում: Այս նպատակով Բանկը պարբերաբար կատարել է տնտեսության ճյուղերի վերլուծություն, ինչպես նաև ՓՄՁ-ի գծով պլանային ցուցանիշները կատարելու նպատակով իրականացվել են ՓՄՁ վարկավորման գծով սքորինգային մոդելի մշակում, ՓՄՁ վարկային հայտերի հաստատման ավտոմատացում, ՓՄՁ վարկավորման գծով աշխատակիցների որակավորման բարձրացում:

Վինտաժային վերլուծությունները, ստրես տեստավորումները, ներքին և արտաքին աուդիտի կողմից կատարվող ստուգումները թույլ են տալիս ժամանակին բացահայտելու և կառավարելու Բանկին բնորոշ ֆինանսական և գործառնական ռիսկերը:

Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 21,588,652,530 /քսանմեկ միլիարդ հինգ հարյուր ութսունութ միլիոն վեց հարյուր հիսուներկու հազար հինգ հարյուր երեսուն/ ՀՀ դրամ, որը ներառում է տեղաբաշխված 172,886,525 /մեկ հարյուր յոթանասուներկու միլիոն ութ հարյուր ութսունվեց հազար հինգ հարյուր քսանհինգ/ հատ սովորական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 100 /մեկ հարյուր/ ՀՀ դրամ անվանական արժեքով, 32,010,000 /երեսուներկու միլիոն տասը հազար/ հատ հաստատագրված տարեկան շահութաբաժնով Ա դասի փոխարկելի արտոնյալ բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 100 /մեկ հարյուր/ ՀՀ դրամ անվանական արժեքով, 4,778,261 /չորս միլիոն յոթ հարյուր յոթանասունութ հազար երկու հարյուր վաթսունմեկ/ հատ հաստատագրված տարեկան շահութաբաժնով Բ դասի փոխարկելի արտոնյալ բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 230 /երկու հարյուր երեսուն/ ՀՀ դրամ անվանական արժեքով: Բանկի լրացուցիչ տեղաբաշխման ենթակա հայտարարված սովորական բաժնետոմսերի քանակը կազմում է 526,110,475 /հինգ հարյուր քսանվեց միլիոն մեկ հարյուր տասը հազար չորս հարյուր յոթանասունհինգ/ հատ՝ յուրաքանչյուրը 100 /մեկ հարյուր/ ՀՀ դրամ անվանական արժեքով:

Հաստատագրված տարեկան շահութաբաժնով Ա դասի փոխարկելի արտոնյալ բաժնետոմսերի (այսուհետ՝ Ա դասի արտոնյալ բաժնետոմսեր) տեղաբաշխման, շահութաբաժնի վճարման կարգը, պայմանները և լուծարային արժեքը հետևյալն են.

- Ա դասի արտոնյալ բաժնետոմսերի տարեկան շահութաբաժնի չափը սահմանել տվյալ բաժնետոմսերի անվանական արժեքի նկատմամբ 12% տարեկան տոկոսադրույքով՝ ֆինանսական տարվա ավարտից հետո ոչ ուշ, քան եռամսյա ժամկետում վճարմամբ:

- Ա դասի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց վճարումը նախատեսել դրամական միջոցներով, թողարկման ժամանակ Խորհրդի կողմից սահմանվող արժեքով՝ թողարկման որոշմամբ,

- Ա դասի արտոնյալ բաժնետոմսերի լուծարային արժեքը սահմանել անվանական արժեքին համարժեք,

- Ա դասի արտոնյալ բաժնետոմսերի գծով շահութաբաժինը ենթակա է վճարման միայն Բանկի զուտ շահույթից և /կամ/ դրա հաշվին ձևավորված հիմնադրամներից,

- Ա դասի արտոնյալ բաժնետոմսերը ենթակա են փոխարկման սովորական բաժնետոմսերի՝ մեկ արտոնյալ բաժնետոմսը մեկ սովորական բաժնետոմս հարաբերակցությամբ: Փոխարկումն իրականացվում է բաժնետերերի պահանջով՝ ոչ ուշ, քան այդ պահանջը Բանկին ներկայացնելուց հետո երկու ամսվա ընթացքում: Փոխարկման պահանջ ներկայացնելու ժամկետը չի սահմանափակվում: Փոխարկումն իրականացվում է Բանկի կողմից լրացուցիչ սովորական բաժնետոմսերի տեղաբաշխման ճանապարհով, որի արդյունքում Ա դասի արտոնյալ բաժնետոմսերը փոխարինվում են նույն քանակությամբ լրացուցիչ սովորական բաժնետոմսերով,

- Ա դասի արտոնյալ բաժնետոմսերի գծով շահութաբաժինը՝ ամբողջությամբ կամ մասամբ, ենթակա չէ վճարման, եթե դա կհանգեցնի Բանկի կողմից ՀՀ կենտրոնական բանկի սահմանված տնտեսական նորմատիվներից որևէ մեկի խախտմանը, ընդ որում՝

ա) ամբողջությամբ կամ մասամբ չվճարված շահութաբաժինը ենթակա չէ հետագայում վճարվելու պայմանով կուտակման,

բ) Բանկի և Ա դասի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատիրոջ միջև որևէ իրավաբանական փաստաթղթով չի կարող նախատեսվել որևէ սահմանափակում Բանկի համար, շահութաբաժնի ամբողջական կամ մասնակի չվճարման դեպքում, ինչպես նաև որևէ իրավաբանական փաստաթղթով չի կարող նախատեսվել այդպիսի սահմանափակումներ նախատեսելու իրավունքի տրամադրում Ա դասի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատիրոջը, բացառությամբ եթե սահմանափակումը վերաբերում է սովորական բաժնետոմսերի գծով շահութաբաժնի վճարմանը: Ընդ որում, սովորական բաժնետոմսերի գծով շահութաբաժինի վճարման՝ սույն պարբերությամբ նշված սահմանափակումը կարող է վերաբերել միայն այն ժամանակահատվածին, որի ընթացքում ամբողջությամբ կամ մասամբ չի վճարվել Ա դասի արտոնյալ բաժնետոմսերին հասանելիք շահութաբաժինը:

Հաստատագրված տարեկան շահութաբաժնով Բ դասի փոխարկելի արտոնյալ բաժնետոմսերի (այսուհետ՝ Բ դասի արտոնյալ բաժնետոմսեր) տեղաբաշխման, շահութաբաժնի վճարման կարգը, պայմանները և լուծարային արժեքը հետևյալն են.

- Բ դասի արտոնյալ բաժնետոմսերի տարեկան շահութաբաժնի չափը սահմանել տվյալ բաժնետոմսերի անվանական արժեքի նկատմամբ 12% տարեկան տոկոսադրույքով՝ ֆինանսական տարվա ավարտից հետո ոչ ուշ, քան եռամսյա ժամկետում վճարմամբ:

- Բ դասի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց վճարումը նախատեսել դրամական միջոցներով, թողարկման ժամանակ Խորհրդի կողմից թողարկման մասին որոշմամբ սահմանվող արժեքով ,

- Բ դասի արտոնյալ բաժնետոմսերի լուծարային արժեքը սահմանել լուծարման պահին նախորդող երեք ամիսների ընթացքում բաժնետոմսերի իրացման արդյունքում ձևավորված շուկայական միջին արժեքը ,

- Բ դասի արտոնյալ բաժնետոմսերի գծով շահութաբաժինը ենթակա է վճարման միայն Բանկի զուտ շահույթից և /կամ/ դրա հաշվին ձևավորված հիմնադրամներից,

- Բ դասի արտոնյալ բաժնետոմսերը ենթակա են փոխարկման սովորական բաժնետոմսերի՝ Բանկի Խորհրդի՝ թողարկման մասին որոշմամբ սահմանված պայմաններով: Փոխարկումն իրականացվում է բաժնետերերի պահանջով՝ ոչ ուշ, քան այդ պահանջը Բանկին ներկայացնելուց հետո երկու ամսվա ընթացքում: Փոխարկման պահանջ ներկայացնելու ժամկետը չի սահմանափակվում: Փոխարկումն իրականացվում է Բանկի կողմից լրացուցիչ սովորական բաժնետոմսերի տեղաբաշխման ճանապարհով,

- Բ դասի արտոնյալ բաժնետոմսերի գծով շահութաբաժինը՝ ամբողջությամբ կամ մասամբ, ենթակա չէ վճարման, եթե դա կհանգեցնի Բանկի կողմից ՀՀ կենտրոնական բանկի սահմանված տնտեսական նորմատիվներից որևէ մեկի խախտմանը, ընդ որում՝

ա) ամբողջությամբ կամ մասամբ չվճարված շահութաբաժինը ենթակա չէ հետագայում վճարվելու պայմանով կուտակման,

բ) Բանկի և Բ դասի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատիրոջ միջև որևէ իրավաբանական փաստաթղթով չի կարող նախատեսվել որևէ սահմանափակում Բանկի համար շահութաբաժնի ամբողջական կամ մասնակի չվճարման դեպքում, ինչպես նաև որևէ իրավաբանական փաստաթղթով չի կարող նախատեսվել այդպիսի սահմանափակումներ նախատեսելու իրավունքի տրամադրում Բ դասի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատիրոջ, բացառությամբ եթե սահմանափակումը վերաբերում է սովորական բաժնետոմսերի գծով շահութաբաժնի վճարմանը: Ընդ որում, սովորական բաժնետոմսերի գծով շահութաբաժինների վճարման՝ սույն պարբերությամբ նշված սահմանափակումը կարող է վերաբերել միայն այն ժամանակահատվածին, որի ընթացքում ամբողջությամբ կամ մասամբ չի վճարվել Բ դասի արտոնյալ բաժնետոմսերին հասանելիք շահութաբաժինը:

ԲԱՆԿԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ և ԱՐԺԵՔՆԵՐԸ

Յունիբանկը դինամիկ զարգացող իննովացիոն բանկ է, որն իր հաճախորդներին տրամադրում է մանրածախ և կորպորատիվ բանկային ծառայությունների լայն տեսականի:

Բանկն իր առաքելությունն է համարում նպաստել Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացմանը, իր հաճախորդների, բաժնետերերի և գործընկերների ֆինանսական վիճակի բարելավմանը, ինչպես նաև՝ որակյալ ֆինանսական ծառայությունների նկատմամբ հասարակության պահանջարկի բավարարմանը:

ՄԵՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

- ուշադիր և ազնիվ վերաբերմունք հաճախորդների նկատմամբ
- ուժեղ թիմ և արդյունքին նպատակաուղղվածություն

- հասարակության վստահություն
- ապրանքանիշի բարձր ճանաչելիություն և հեղինակություն
- հուսալիություն և կայունություն

ՄԵՆՔ ՁԳՏՈՒՄ ԵՆՔ

- ամրապնդել և ընդլայնել բանկի դիրքերը ֆինանսական շուկայում
- ապահովել ծառայությունների մատուցման բարձր որակ և կատարելագործել սպասարկման գործընթացը
- բարձրացնել պահանջված բանկային ծառայությունների հասանելիության մակարդակը
- ներդնել բիզնեսի վարման թափանցիկ մոդելի և կորպորատիվ կառավարման լավագույն փորձը
- բարձրացնել բանկի ներդրումային գրավչություն

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական պատասխանատվության սկզբունքներին համաձայն Յունիբանկը մշտապես ամենագործուն մասնակցությունն է ցուցաբերում երկրի հասարակական կյանքում՝ իր ուժերն ուղղորդելով ենթակառուցվածքների զարգացմանն ու նոր աշխատատեղերի ստեղծմանը: Յունիբանկը տնտեսական և սոցիալական ծրագրերի պատասխանատու մասնակից է: Բանկն ակտիվ մասնակցություն է ցուցաբերում բարեգործական և հովանավորչական ծրագրերում, որոնք ուղղված են կրթության, մշակույթի և սպորտի ոլորտների զարգացմանը, ինչպես նաև բնակչության ֆինանսական գրագիտության բարձրացմանը:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԷԹԻԿԱ

Բանկում փոխգործակցությունը կառուցված է անհատի հարգանքի և արդյունքին հասնելու հիման վրա՝ նպատակ ունենալով հաջող կերպով լուծելու մասնագիտական խնդիրները և պահպանելու կառուցողական հարաբերությունները անձնակազմում: Մենք աշխատում ենք համապատասխանել գործարար էթիկայի սկզբունքներին, պահպանելով գործող օրենքները, ինչպես նաև բանկում սահմանված նորմերն ու կանոնները:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բանկն իր գործունեության ընթացքում ձգտում է հետևել շրջակա միջավայրի պաշտպանության սկզբունքներին: Վարկավորման ծրագրերի իրականացման ժամանակ բանկը հաշվի է առնում շրջակա միջավայրի պաշտպանության ստանդարտների համապատասխանության փաստը և նախապատվություն է տալիս էկոլոգիապես մաքուր ապրանքների արտադրությանն ու ռեսուրսախնայող գործունեություն իրականացնող ծրագրերի վարկավորմանը: Բանկն իր գործունեության ընթացքում ձգտում է նվազագույնի հասցնել այն նախագծերի ֆինանսավորումը, որոնք կարող են բացասական ազդեցություն թողնել շրջակա միջավայրի վրա:

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Ռիսկերի կառավարումը Յունիբանկի կառավարման համակարգի կարևորագույն մաս է կազմում: Յունիբանկում ռիսկերի կառավարումն իրենից ներկայացնում է Բանկի պոտենցիալ վնասների կանխարգելմանն ու նվազեցմանն ուղղված փոխկապակցված գործողությունների համակողմանի համակարգ: Ռիսկերի կառավարման հիմնական նպատակն այն է, որ Յունիբանկը կարողանա իր

ռիսկերի գումարային մեծությունը պահպանել Բանկի ռազմավարական ծրագրով սահմանված ռիսկերի մակարդակի վրա և բարձրացնել Բանկի կապիտալի եկամտաբերությունը:

Յունիբանկում ռիսկերի կառավարման համակարգն առաջնորդվում է ՀՀ օրենքներով, ՀՀ ԿԲ օրենքներով և նորմատիվ ակտերով, կանոնակարգերով, Բազելյան կոմիտեի համապատասխան փաստաթղթերով, Ռիսկերի Կառավարման Համընդհանուր Սկզբունքներով / Generally Accepted Risk Principles – GARP/, ինչպես նաև հնարավոր է օգտագործվեն Բանկի կողմից ընդունված գնահատման և վերլուծության համար սեփական մեթոդներ, ցուցանիշներ և կառավարման գործիքներ: Ռիսկերի կառավարումն իրականացվում է ռիսկերի նույնականացման, չափման և մոնիթորինգի շարունակական գործընթացի միջոցով՝ ռիսկերի սահմանաչափերի և հսկողության այլ միջոցների պահպանմամբ: Ռիսկերի կառավարման գործընթացը ծայրաստիճան կարևոր է Բանկի շահութաբերության պահպանման համար, և Բանկում աշխատող յուրաքանչյուր անձ պատասխանատվություն է կրում իր պարտականությունների հետ կապված ռիսկերի համար: Բանկը խրախուսում է ռիսկերի կառավարմանն առնչվող գիտելիքների մակարդակի բարձրացմանը նպաստող մշակույթի ձևավորումը՝ մասնավորապես համապատասխան սեմինարների կազմակերպման միջոցով:

Իր գործունեության ընթացքում Բանկը ենթարկվում է մի շարք ֆինանսական ռիսկերի, և այդ գործունեությունը ներառում է ռիսկի կամ ռիսկերի համադրության որոշ աստիճանի վերլուծություն, գնահատում, ստանձնում և կառավարում:

Վարկային ռիսկ է համարվում վարկառուի կողմից ստանձնած վարկային պարտավորությունների չկատարման կամ թերի կատարման և վերջինիս արդյունքում Բանկի վնաս կրելու հավանականությունը,

Բանկը կարգավորում է վարկային ռիսկի մակարդակները՝ սահմանելով մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի, ինչպես նաև վարկավորման ճյուղային կամ աշխարհագրական սեգմենտների գծով ընդունելի ռիսկի գումարների սահմանաչափեր:

Շուկայական ռիսկ է համարվում շուկայական գործոնների (արտարժույթի փոխարժեք, տոկոսադրույքներ) փոփոխությամբ պայմանավորված Բանկի վնաս կրելու հավանականությունը,

Իրացվելիության ռիսկ է համարվում Բանկի կողմից իր պարտատերերի օրինական պահանջները ճիշտ ժամանակին չբավարարման խնդիրների ի հայտ գալու և վերջինիս արդյունքում Բանկի վնաս կրելու հավանականությունը,

Կապիտալի համարժեքության ռիսկ է համարվում ռիսկով կշռված ակտիվների և/կամ ընդհանուր կապիտալի տարրերի փոփոխման պարագայում Բանկի կապիտալի անբավարարության (ոչ համարժեքության) հավանականությունը:

Գործառնական ռիսկ է համարվում Բանկի ներքին կազմակերպչական և/կամ բիզնես գործընթացների խափանման (անձնակազմի ոչ համարժեք կամ ոչ կանոնակարգային գործողություններ, դիտավորությամբ կատարված կամ ոչ միտումնավոր գործարքային սխալներ, գործառնական համակարգերի կամ տեխնոլոգիական բնույթի այլ խափանումներ) կամ տեխնածին բնույթի արտաքին գործոնների ազդեցության արդյունքում Բանկի վնաս կրելու հավանականությունը:

Իրավական ռիսկ է համարվում Բանկի ներքին իրավական ակտերի, կիրառվող բիզնես գործընթացների, գործիքների, գործարքների, ինչպես նաև վերջիններս կարգավորող

պայմանագրերի գործող օրենսդրությանը չհամապատասխանելու և դրա արդյունքում Բանկի վնաս կրելու հավանականությունը:

Համբավի (հեղինակության) ռիսկ է համարվում հանրության բացասական կարծիքի հետևանքով Բանկի կողմից իր գործող կամ պոտենցիալ հաճախորդներին, գործընկերներին կորցնելու կամ վերջիններիս հետ իրականացվող գործարքների/գործառնությունների ծավալի նվազման հավանականությունը, որը կարող է հանգեցնել Բանկի համար ֆինանսական կորուստների և/կամ իրացվելիության խնդիրների:

Ռազմավարական (բիզնես մոդելի) ռիսկ է համարվում Բանկի կողմից ոչ իրատեսական (անհամապատասխան) ռազմավարության ընտրության, ինչպես նաև ընտրված ռազմավարության հիմքում ընկած ենթադրությունների, ցուցանիշների, նպատակների և/կամ այլ գործոնների բացասական փոփոխությունների ի հայտ գալու հավանականությունը, որը կարող է հանգեցնել Բանկի ֆինանսական կորուստների:

Բանկի ռիսկերի կառավարման համակարգի բաղադրիչներն են՝

Ռազմավարությունը,
Մեթոդաբանությունը,
Վերահսկողությունը,
Արդյունավետության գնահատումը,
Արդիականացումը (անհրաժեշտության դեպքում):

Բանկային ռիսկերի կառավարում է համարվում Բանկի իրավասու մարմինների, ստորաբաժանումների կամ անձանց կողմից այնպիսի գործողությունների իրականացումը, որը հնարավորություն կընձեռի բանկային ռիսկերի առկայության և անորոշության պայմաններում ապահովել դրական ֆինանսական արդյունք:

ՌԿՀ-ն գործում է անընդհատության սկզբունքով՝ հաշվի առնելով ներքին և արտաքին միջավայրերի դինամիկ փոփոխությունները:

Բանկային ռիսկերի կառավարումն իրականացվում է ուղղահայաց եռաստիճան համակարգով՝

Ռազմավարական մակարդակ՝ ռիսկերի բացահայտում, ընդունելի ախորժակի, գործընթացների և սահմանաչափերի սահմանում,

Վերահսկողական/հսկողական մակարդակ՝ մոնիտորինգ, շեղումների վերլուծություն, գնահատում և համապատասխանեցում,

Մարտավարական մակարդակ՝ ռիսկերի ընթացիկ կառավարում թույլատրելի սահմանաչափերի միջակայքում (ռիսկ պարունակող գործարքների իրականացում):

Բանկային ռիսկերի կառավարման գործընթացի փուլերն են՝

Ռիսկերի բացահայտումը (սահմանումը), ներառյալ ռիսկի գործոնների վերլուծությունը (տարանջատումը),

Ռիսկերի գնահատման մեթոդների սահմանումը (ըստ տեսակների) և ռիսկերի գնահատումը (կանխատեսումը),

Ռիսկերի սահմանափակումը, այն է՝ դիվերսիֆիկացիայի սկզբունքների, ներքին սահմանաչափերի հաստատումը, ինչպես նաև համապատասխան ներքին իրավական ակտերի մշակումը և ընդունումը, որոնցում, մասնավորապես, ներառվում են բազմակի ստուգման, միևնույն գործընթացի իրականացումը տարբեր, միմյանց հետ չփոխկապակցված անձանց վրա դնելու և սխալների բացահայտման սկզբունքները:

Ռիսկերի գործնական կառավարումը, այն է՝ համապատասխան գործողությունների իրականացումը, իրավիճակային արձագանքումը (խուսափում, նվազեցում/հեջավորում, փոխանցում/ապահովագրություն, ռիսկի ընդունում և այլն),

Ռիսկերի մոնիտորինգը, վերլուծությունը, ընթացիկ (օպերատիվ) և պարբերական հաշվետվությունների/տեղեկատվության տրամադրումը ուղղահայաց և հորիզոնական կտրվածքներով,
Ռիսկերի կառավարման հետգործարքային վերահսկողությունը:
Յուրաքանչյուր ռիսկի տեսակի կառավարման գործընթացը (սահմանաչափերը, կառավարումը, վերահսկողությունը, հաշվետվությունները, պատասխանատուները և այլն) կարգավորվում է համապատասխան կարգերով, ընթացակարգերով:

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Ֆինանսական արդյունքների մասին
« 31 » ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թ.

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ ՀՀ ք.Երևան, 0010, Չարենցի 12-53,
(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթա-գրու-թյուններ	Ընթացիկ միջանկյալ ժամանակա-շրջան 01.10.21_31.12.21	Հաշվետու ժամանակա-շրջան 01.01.21_31.12.21	Նախորդող ֆինանսական տարվա համադրելի ընթացիկ միջանկյալ ժամանակա-շրջան (ստուգված) 01.10.20_31.12.20	Նախորդ ժամանակաշրջան 01.01.20_31.12.20 (ստուգված)
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	3	4,470,784	20,146,879	5,036,784	19,471,091
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	3	(2,516,353)	(9,958,322)	(2,340,860)	(9,419,847)
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ		**1,954,431**	**10,188,557**	**2,695,924**	**10,051,244**
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	4	1,736,905	4,441,491	1,198,576	2,770,901
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	4	(177,837)	(705,643)	(179,228)	(614,638)
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ		**1,559,068**	**3,735,848**	**1,019,348**	**2,156,263**
Եկամուտ շահաբաժիններից					
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	5	1,550,091	3,665,500	(288,875)	1,118,369
Այլ գործառնական եկամուտներ	6	218,104	700,368	932,008	1,360,247
Գործառնական եկամուտներ		**5,281,694**	**18,290,273**	**4,358,405**	**14,686,123**
Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին	7	(2,579,265)	(8,385,017)	(2,593,611)	(5,786,898)
Ընդհանուր վարչական ծախսեր	8	(1,008,808)	(3,911,513)	(846,442)	(3,862,403)
Այլ գործառնական ծախսեր	9	(2,053,974)	(5,440,223)	(1,435,524)	(4,595,106)
Վերահսկվող միավորներում ներդրումներից զուտ շահույթ/վնաս	10				
Շահույթը/ (վնասը) մինչև հարկումը		**(360,353)**	**553,520**	**(517,172)**	**441,716**
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	11	11,949	(152,549)	(12,706)	(203,140)
Շահույթը (վնասը) հարկումից հետո		**(348,404)**	**400,971**	**(529,878)**	**238,576**
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	12				
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ	12				
Ժամանակաշրջանի զուտ շահույթ					
Այդ թվում՝					
Մայր կազմակերպության բաժնեմաս					
Չվերահսկվող բաժնեմաս					

Հաշվետվության վավերացման ամսաթիվը _14.01.2022թ.

ԿՏ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին

« 31 » ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թ.

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ ՀՀ ք.Երևան, 0010, Չարենցի 12-53,

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաշվետու ժամանակաշրջան 01.01.21_31.12.21	Նախորդ ժամանակաշրջան 01.01.20_31.12.20
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		
Փոխարժեքային տարբերություններ արտերկրյա գործառնությունների վերահաշվարկից		
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ վերագնահատումներ	(190,716)	(141,484)
Դրամական հոսքերի հեջավորում		
Ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատումներից օգուտներ	(102,555)	408,411
Այլ համապարփակ եկամուտի գծով շահութահարկ	52,789	(48,047)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո	**(240,482)**	**218,880**
Համապարփակ ֆինանսական արդյունք	**160,489**	**457,456**
Այդ թվում՝		
Մայր կազմակերպության բաժնեմաս		
Չվերահսկվող բաժնեմաս		

ՄԵՍՐՈՊ ՀԱԿՈԲՅԱՆ

ԳԱՎԱՌ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը _14.01.2022թ.

ԿՏ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ֆինանսական վիճակի մասին

« 31 » ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թ.

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ ՀՀ ք.Երևան, 0010, Չարենցի 12-53,

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

	ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանո-թագրու-թյուններ	Ընթացիկ միջանկյալ ժամանակա-շրջանի վերջի դրությամբ 31.12.2021	Նախորդող ֆինանսական տարվա վերջի դրությամբ (ստուգված) 31.12.2020
1	**Ակտիվներ**			
1.1	Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	13	58,273,573	28,450,237
1.2	Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	14	19,518,322	18,197,520
1.3	Ածանցյալ ֆինանասական ակտիվներ	14.1	5,239	2,020
1.4	Հաճախորդներին տրված վարկեր և այլ	16	139,400,064	156,575,090
1.5	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	17	1,649,514	2,563,117
1.6	Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	18	15,232,604	13,986,817
1.7	Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	20	13,936,280	12,589,041
1.8	Հետաձգված հարկային ակտիվներ	11		
1.9	Կանխավճար շահութահարկի գծով	21.1	310,366	127,210
1.10	Այլ ակտիվներ	21	7,525,271	5,681,000
	Ընդամենը՝ ակտիվներ		**255,851,233**	**238,172,052**
2	**Պարտավորություններ**			
2.1	Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	22	10,908,887	29,573,686
2.2	Ածանցյալ ֆինանասական պարտավորություններ	22.1	10,867	30,336
2.3	Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	23	191,869,529	156,805,550
2.4	Փոխառություն	23.1	3,121,387	5,905,308
2.5	Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	24	12,168,789	9,498,202
2.6	Ընթացիկ հարկի գծով պարտավորություն	27.2	23,764	
2.7	Հետաձգված հարկային պարտավորություններ	11	374,921	312,486
2.8	Այլ պարտավորություններ	27	2,678,885	2,147,402
	Ընդամենը՝ պարտավորություններ		**221,157,029**	**204,272,970**
3	**Կապիտալ**			
3.1	Կանոնադրական կապիտալ	28	21,588,653	20,489,653
3.2	Էմիսիոն եկամուտ		9,605,638	9,605,638
3.3	Պահուստներ՝		2,123,932	2,331,145
3.3.1	Գլխավոր պահուստ		641,779	608,510
3.3.2	Վերագնահատման պահուստներ		1,482,153	1,722,635
3.4	Չբաշխված շահույթ (վնաս)		1,375,981	1,472,646
3.5	Կապիտալի այլ տարրեր			
	Մայր կազմակերպությանը պատկանող կապիտալ			
	Փոքրամասնության բաժնեմաս			
	Ընդամենը՝ կապիտալ		**34,694,204**	**33,899,082**
	Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ		**255,851,233**	**238,172,052**

Հաշվետվության վավերացման ամսաթիվը _14.01.2022թ.

ԿՏ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին

« 31 » ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թ.

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ ՀՀ, ք.Երևան, 0010, Չարենցի 12-53

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

Սեփական կապիտալի տարրերի անվանումը	Կանոնադրական կապիտալ			Էմիսիոն եկամուտ/վնաս	Գլխավոր պահուստ	Փոխարժեքային տարբերություններ արտերկրյա գործառնությունների	Իրական արժեքով այլ հատապարիսկ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վերագնահատումից	Դրամական հոսքերի հեջավորում	Ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատումներից օգուտներ	Չբաշխված շահույթ/վնաս	Միջանկյալ շահութաբաժիններ	Ընդամենը	Չվերահսկվող բաժնեմաս	Ընդամենը սեփական կապիտալ
	Կանոնադրական կապիտալ	Հետ գնված կապիտալ	Ջուտ գումարը											
Հոդվածներ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (I աղյուսակ)														
1. Մնացորդը նախորդ ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2020 թ. (ստուգված/ստուգված)	20,489,653		20,489,653	9,605,638	508,876		52,872		1,450,883	1,717,824				33,825,746
1.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը														
2. Վերահաշվարկված մնացորդը	20,489,653		20,489,653	9,605,638	508,876		52,872		1,450,883	1,717,824				33,825,746
3. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝														-
3.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ														-
3.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված և շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին														-
4. Համապարփակ եկամուտ														
5. Շահութաբաժիններ										(384,120)				(384,120)
6. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝														-
6.1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում														-
7. Ներքին շարժեր, այդ թվում՝					99,634		(116,017)		334,897	138,942				457,456
7.1. Մասհանումներ գլխավոր պահուստին					99,634					(99,634)				-
7.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում														-
7.3. Էմիսիոն վնասի ծածկում														-
7.4. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում									334,897	238,576				573,473
7.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր							(116,017)							(116,017)
8. Մնացորդը նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջանի վերջում առ 31 Դեկտեմբերի 2020թ.. (ստուգված/չստուգված)	20,489,653	-	20,489,653	9,605,638	608,510	-	(63,145)	-	1,785,780	1,472,646	-	-	-	33,899,082

Ընթացիկ տարվա միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (II աղյուսակ)														
9. Մնացորդը ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2021 թ. (ստուգված/չստուգված)	**20,489,653**		**20,489,653**	**9,605,638**	**608,510**		**(63,145)**		**1,785,780**	**1,472,646**	**-**	**-**	**-**	**33,899,082**
9.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը										(52,843)				(52,843)
10.Վերահաշվարկված մնացորդը	20,489,653		20,489,653	9,605,638	608,509		(63,145)		1,785,780	1,419,803				33,846,238
11. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝	1,099,000		1,099,000											1,099,000
11.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ	1,099,000		1,099,000											1,099,000
11.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված և շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին														-
12. Այլ համապարփակ եկամուտ														-
13. Շահութաբաժիններ										(411,524)				(411,524)
14. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝														-
14.1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում														-
15. Ներքին շարժեր, այդ թվում՝					33,269		(156,387)		(84,095)	367,702				160,489
15.1. Մասհանումներ գլխավոր պահուստին					33,269					(33,269)				-
15.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում														-
15.3. Էմիսիոն վնասի ծածկում														-
15.4. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճ/նվազում									(84,095)					(84,095)
15.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր							(156,387)			400,971				244,584
16. Մնացորդը միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի վերջում առ 31 Դեկտեմբերի 2021թ.	**21,588,653**	**-**	**21,588,653**	**9,605,638**	**641,778**	**-**	**(219,532)**	**-**	**1,701,685**	**1,375,981**	**-**	**-**	**-**	**34,694,203**

Հաշվետվության վավերացման ամսաթիվը _14.01.2022թ.

ԿՏ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ

« 31 » ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թ.

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ ՀՀ ք.Երևան, 0010, Չարենցի 12-53

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրություն	Նախորդ ժամանակաշրջան 31.12.2020	Հաշվետու ժամանակաշրջան 31.12.2021
1. Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		x	x
Դրամական միջոցների զուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը		**10,270,079**	**15,674,080**
Ստացված տոկոսներ		18,849,305	19,280,211
Վճարված տոկոսներ		(9,776,728)	(10,226,887)
Ստացված կոմիսիոն գումարներ		3,233,811	4,042,123
Վճարված կոմիսիոն գումարներ		(666,067)	(705,643)
Առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներից օգուտ/(վնաս)		1,336,691	1,263,186
Արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններից օգուտ/(վնաս)		2,037,726	4,063,559
Նախկինում դուրս գրված ակտիվների վերադարձ		1,854,588	4,431,286
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ		(3,821,540)	(4,044,819)
Գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտներ և վճարված այլ ծախսեր		(2,777,707)	(2,428,936)
Դրամական հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից		**(52,521,698)**	**26,206,670**
Գործառնական ակտիվներում նվազում/ (ավելացում)		(11,071,031)	(9,700,727)
այդ թվում՝ վարկերի և փոխատվությունների նվազում/ (ավելացում)		(13,568,076)	(6,992,122)
առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթերի նվազում (ավելացում)		1,987,110	(732,220)
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների նվազում/ (ավելացում)		-	-
այլ գործառնական ակտիվների նվազում/(ավելացում)		509,935	(1,976,385)
Գործառնական պարտավորությունների ավելացում (նվազում)		(41,450,667)	35,907,397
այդ թվում՝ հաճախորդների նկատմամբ պարտավորությունների ավելացում/(նվազում)		(40,566,623)	34,852,336
այլ գործառնական պարտավորությունների նվազում (ավելացում)		(884,044)	1,055,061
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը		**(42,251,619)**	**41,880,750**
Վճարված շահութահարկ		(669,294)	(285,226)
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		**(42,920,913)**	**41,595,524**
2. Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		x	x
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների նվազում (ավելացում)		(410,604)	(1,173,555)
Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումների նվազում (ավելացում)			
Այլ բանկերում տեղաբաշխված ավանդների նվազում (ավելացում)		6,902,338	1,893,582
Հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում կապիտալ ներդրումների նվազում (ավելացում)		(499,028)	(682,667)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(688,754)	(612,280)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում		245,910	46,803
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից		(325,779)	(1,500,037)
Զուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		**5,224,083**	**(2,028,154)**
3. Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից		x	x
Վճարված շահաբաժիններ		(384,120)	(384,120)
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)		(337,930)	(2,476,635)
Բանկերից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)		19,012,563	(4,468,060)
Ստացված այլ փոխառությունների ավելացում (նվազում)		(1,074,556)	(1,352,569)
Բանկի կողմից թողարկված արժեթղթերի ավելացում (նվազում)		(757,846)	2,670,587
Բաժնետերերի ներդրումները կանոնադրական կապիտալում			1,099,000
Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարների ավելացում (նվազում)		(479,289)	(564,054)
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից			
Զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից		**15,978,822**	**(5,475,851)**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		592,538	(4,268,183)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)		**(21,125,470)**	**29,823,336**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	13_2	**49,575,707**	**28,450,237**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	13_2	**28,450,237**	**58,273,573**

Հաշվետվության վավերացման ամսաթիվը _14.01.2022թ.

ԿՏ

Հավելված 1

«Բանկերի կողմից իրենց վերաբերյալ
տեղեկությունների հրապարակման (տրամադրման) կարգի»

ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ (եռամսյակային)

Բանկի անվանումը ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ

Ամսաթիվը 01.10.2021 թ-ից
31.12.2021 թ.

(հազ. դրամ)

Նորմատիվներ	Նորմատիվի փաստացի մեծությունը՝ հաշվարկված բանկի համար	ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը	Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը
1	*2*	*3*	*4*
Բանկի կանոնադրական հիմնադրամի նվազագույն չափը	**31,194,291**	**50,000**	խախտում առկա չէ
Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը	**31,042,749**	**30,000,000**	խախտում առկա չէ
$Ն_1^1$ Հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	**13.26%**	**9%**	խախտում առկա չէ
$Ն_1^2$ Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	**14.71%**	**12%**	խախտում առկա չէ
$Ն_2^1$ Բանկի բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	**28.30%**	**15%**	խախտում առկա չէ
$Ն_2^{11}$ Բանկի առաջին խմբի արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և առաջին խմբի արժույթներով արտահայտված ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը	**33.65%**	**4%**	խախտում առկա չէ
$Ն_2^2$ Բանկի բոլոր արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և բոլոր արժույթներով արտահայտված ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը	**97.97%**	**60%**	խախտում առկա չէ
$Ն_2^{21}$ Բանկի առաջին խմբի արժույթներով արտահայտված բարձր իրացվելի ակտիվների և առաջին խմբի արժույթներով արտահայտված ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը	**88.90%**	**10%**	խախտում առկա չէ
$Ն_2^3$ Բանկի բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցությունը (բոլոր արժույթներով)	**289.10%**	**100%**	խախտում առկա չէ
$Ն_2^3$(FX) Բանկի բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցությունը (առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթների խմբի գծով)	**109.50%**	**80%**	խախտում առկա չէ
$Ն_2^3$ (FX) Բանկի բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև նվազագույն հարաբերակցությունը (յուրաքանչյուր երկրորդ խմբի նշանակալի արժույթի գծով)	**112.50%**	**80%**	առկա է խախտում
$Ն_2^4$ Բանկին հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև նվազագույն հարաբերակցությունը (բոլոր արժույթներով)	**164.00%**	**100%**	խախտում առկա չէ
$Ն_2^4$ (FX) Բանկին հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև նվազագույն հարաբերակցությունը (առաջին խմբում ներառվող նշանակալի արժույթների խմբի գծով)	**117.80%**	**80%**	խախտում առկա չէ
$Ն_2^4$ (FX) Բանկին հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների միջև նվազագույն հարաբերակցությունը (յուրաքանչյուր երկրորդ խմբի նշանակալի արժույթի գծով)	**1571.30%**	**80%**	խախտում առկա չէ
$Ն_3^1$ Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը	**19.22%**	**20%**	խախտում առկա չէ
$Ն_3^2$ Խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը	**177.12%**	**500%**	խախտում առկա չէ
$Ն_4^1$ Բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը	**3.39%**	**5%**	խախտում առկա չէ
$Ն_4^2$ Բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը	**14.56%**	**20%**	խախտում առկա չէ
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում տեղաբաշխված պարտադիր պահուստների նվազագույն չափը		**4,18**	խախտում առկա չէ
ՀՀ Դրամով	**x**	**4%**	խախտում առկա չէ
Արտարժույթով *դրամով*	**x**	**8%**	խախտում առկա չէ
արտարժույթով	**x**	**10%**	խախտում առկա չէ
Արտարժույթային դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը	**4.57%**	**10%**	խախտում առկա չէ
Ըստ առանձին արտարժույթների յուրաքանչյուր արտարժույթի դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը՝ *ԱՄՆ դոլարով*	**-3.72%**	**7%**	
Եվրոյով	**0.07%**	**7%**	խախտում առկա չէ
Ռուսական ռուբլիով	**0.03%**	**7%**	խախտում առկա չէ
Այլ	**x**	**x**	խախտում առկա չէ

Կ.Տ.